Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N03

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստի

ք.Երևան 03 սեպտեմբերի 2020թ

ժամը 16^{30}

Մասնակցում էին՝

Ռոմանոս Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Վաչե Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ավագ Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վահե Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Մարատ Գրիգորյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու

Բացակա էին՝

Սիլվա Ադամյան	Բնապահպանական հասարակական միություն ՀԿ
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

Հրավիրված էին՝

Տարոն Հակոբյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Սուրեն Սեմերջյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի օրենսդրության կատարելագործման և մեթոդաբանության վարչության վերլուծությունների մշակման բաժնի առաջատար մասնագետ

Հովհաննես Հասրաթյան	ԲԸՏՄ-Խորհրդական, կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Արթուր Ափյան	ԲԸՏՄ-Խորհրդական, կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Հարություն Բարսեղյան	ԲԸՏՄ- Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ
Բագրատ Նահապետյան	ԲԸՏՄ - Որակի ապահովման վարչության պետ
Արմեն Մովսիսյան	ԲԸՏՄ Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչության պետ
Ռոզա Սեխլեյան	ԲԸՏՄ Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչության վերլուծության բաժնի պետ
Սամվել Բեգլարյան	ԲԸՏՄ Որակի ապահովման վարչության գլխավոր մասնագետ

ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդում ընդգրկված՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» գիտական կազմակերպության (ներկայացուցիչ՝ Գևորգ Բալումյան) և «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության (ներկայացուցիչ ՝ Պերճ Խաչատրյան) անդամությունը երկու տարով երկարաձգելու կամ նոր անդամ ընտրելու վերաբերյալ:

Հարց 2

Տեսչական մարմնի կառավարման խորհրդում ընդգրկված՝ «Բնապահպանական հասարակական միություն» հասարակական կազմակերպության (ներկայացուցիչ ՝ Սիլվա Ադամյան) անդամության դադարեցման վերաբերյալ:

Հարց 3

Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում Գնել Հասրաթյանի թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ,

Հարց 4

Տեսչական մարմնի բյուջետային հայտի նախագծին հավանություն տալու վերաբերյալ,

Հարց 5

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի թիվ 2085-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու վերաբերյալ,

Հարց 6

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդոլոգիան հաստատելու վերաբերյալ,

Հարց 7

«Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020-2022 թվականների «Սեվծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոպերնիկուս» համակարգով» ծրագրի շրջանակներում Սևանա լճի և ջրհավաք ավազանի բնապահպանական ուսումնասիրություն (մոնիտորինգ) իրականացնելու աշխատանքների կազմակերպման մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծն ի գիտություն ընդունելու վերաբերյալ,

Քննարկելով ներկայացված հարցերը Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդում ընդգրկված՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» գիտական կազմակերպության (ներկայացուցիչ՝ Գևորգ Բալումյան) և «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության (ներկայացուցիչ ՝ Պերճ Խաչատրյան) անդամությունը երկու տարով երկարաձգել:

Կողմ 7, դեմ 0

2. Ընդունել ի գիտություն՝ Տեսչական մարմնի կառավարման խորհրդում ընդգրկված՝ «Բնապահպանական հասարակական միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝ Սիլվա Ադամյանի անդամության դադարեցումը, և Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդում նոր անդամ ընտրելը:

Կողմ 7, դեմ 0

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակելու համար Գնել Հասրաթյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին:

Կողմ 7, դեմ 0

4. Հավանություն տալ՝ Տեսչական մարմնի բյուջետային հայտի նախագծին:

Կողմ 7, դեմ 0

5. Հավանություն տալ՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի թիվ 2085-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

Կողմ 7, դեմ 0

6. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդոլոգիան:

Քվեարկման չի դրվել

7. Ի գիտություն ընդունել՝ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020-2022 թվականների «Սեվծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոպերնիկուս» համակարգով» ծրագրի շրջանակներում Սևանա լճի և ջրհավաք ավազանի բնապահպանական ուսումնասիրություն (մոնիտորինգ) իրականացնելու աշխատանքների կազմակերպման մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը:

Ընդունվել է ի գիտություն

Խորհրդի դիտարկումները.

Հարց 1-ի վերաբերյալ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանը անդրադարձավ Պերճ Խաչատրյանի՝ Խորհրդի նիստին բացակայելու փաստին, ինչի վերաբերյալ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի քարտուղարը զեկուցեց, որ Պերճ Խաչատրյանը օրենքով սահմանված կարգով ծանուցվել է և օրակարգի և կից նյութերի վերաբերյալ որևէ առարկություն չի ներկայացրել, ինչի արդյունքում Խորհուրդը որոշեց հարցը դնել քվեարկության:

Հարց 2-ի վերաբերյալ՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի նախագահի կողմից առաջարկվեց սկսել գործընթաց՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդում նոր անդամ ընտրելու վերաբերյալ:

Հարց 3-ի վերաբերյալ՝ Գնել Հասրաթյանը ներկայացրեց ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020 թվականի տեսլականը, որում անդրադարձել է՝

- կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարին,
- ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը,
- աշխատակիցների մասնագիտական գիտելիքների խորացման, նրանց գործնական հմտությունների կատարելագործման, ինչպես նաև աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման դասընթացներին,
- վերստուգման գործընթացում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը,
- գերժամանակակից լաբորատորիայի ստեղծմանը և/կամ գործող լաբորատորիայի վերազինմանը:

Գնել Հասրաթյանը ներկայացրեց իր կողմից կատարված աշխատանքները ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարելու ժամանակահատվածում, մասնավորապես անդրադարձավ՝

- «ՊԱՀՊԱՆԻՐ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ» ծրագրի մշակմանը,
- ՀՀ-ում գործող մի շարք միջազգային կառույցների հետ համագործակցությանը,
- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանի հաստատմանը,
- կանխարգելիչ ծրագրերի մշակմանը,
- Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացված վարչական վարույթի գործերի քննությանը և այլ գործառույթների շրջանակներում արձանագրված արդյունքներին,
- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողական աշխատանքների ամփոփ ցուցանիշներին:

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամների կողմից տրվեցին հարցեր տեսլականի և կատարված աշխատանքների վերաբերյալ: Հնչեցված հարցերին Գնել Հասրաթյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Հարց 4՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի բյուջետային հայտի նախագծին հավանություն տալու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանը քվեարկեց կողմ հաշվի առնելով, որ նախագիծն արդեն իսկ համաձայնեցված է ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

Հարց 5-ի վերաբերյալ մտահոգություն հայտնեց ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ Վ. Տերտերյանը, ինչը վերաբերում էր նախատեսվող փոփոխությամբ բյուջեի բեռի ավելացմանը, ինչի վերաբերյալ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարող Գ. Հասրաթյանը համեմատական տանելով ներկա և նախատեսվող համազգեստների արժեքների միջև հիմնավորեց, որ այդ փոփոխությունը ավելացման փոխարեն կկրճատի ծախսերը:

Հարց 6-ի քվեարկման չի դրվել

Հարց 7-ի ընդունվել է ի գիտություն

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ) _____ Ռ.Պետրոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ (խորհրդի քարտուղար) _____ Հ. Բարսեղյան